

# ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ավետիսյան Գ. Ռ.

ՀՀ, ք. Գյումրի, ՇՊՀ, [Gayane.avetisyan.5@mail.ru](mailto:Gayane.avetisyan.5@mail.ru)

Իր մեծությամբ ՀՀ երկրորդ քաղաքը հանդիսացող Գյումրին գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում՝ Շիրակի միջլեռնային գոգահովտի կենտրոնական հատվածում: Քաղաքը տեղադրված է 1530մ բացարձակ բարձրության վրա՝ Ախուրյան գետի հովտի ձախափնյա հատվածում:

Բնական, սոցիալ-տնտեսական, էկոլոգիական և այլ պայմաններով Գյումրին տարբերվում է այլ բնակավայրերից: Քաղաքն ունի խիստ ցամաքային կլիմա, որտեղ գերակշռում են չորային, սակավաձյուն ձմեռները, բազմիցս ավերվել է երկրաշարժերից:

Ուսումնասիրելով Գյումրիի էկոլոգիական վիճակը՝ քաղաքի արտաքին տեսքը, քաղաքաշինության զարգացման պայմանները, հողապահպանության, աղբահանության, ջրամատակարարման խնդիրները, մաքրման կայանների աշխատանքը, համոզվեցինք, որ Գյումրիում մարդու գործունեությամբ պայմանավորված՝ տեղի է ունենում շրջակա միջավայրի վատթարացում:

Մինչև 1988թ. Գյումրի քաղաքը զբաղեցրել է 2883,7 հա տարածք, կանաչ գոտու մակերեսը կազմել է 504հա, որն էլ ունեցել է ռոռզման ցանց (էկոլոգիական տեղեկատու Գյումրիում գործող հասարակական և պետական կառույցների համար, Ե., 1999թ.): Տեղի ունեցած երկրաշարժի, էներգետիկ ճգնաժամի և տնտեսաիրավական սխալ գործունեության հետևանքով կանաչապատ տարածքները կրճատվել են 52,93%-ով, տուժել է նաև ռոռզման ցանցը (Հասարակության բնապահպանական իրազեկության և շահերի պաշտպանության տեղեկատու ուղեցույց, Գ., 2008թ.):

2013թ. Գյումրի համայնքի տարածքը կազմում է 4429հա, իսկ կանաչ զանգվածների և ծառատնկված վայրերի ընդհանուր մակերեսը քաղաքի սահմանագծում՝ 447,6 հա (Գյումրի քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման գործընթացների հանրային մոնիթորինգի արդյունքները,

2014թ): Վերջին տարիներին Գյումրիում իրականացվել են կանաչապատման աշխատանքներ, սակայն կատարված աշխատանքների ծավալները չափազանց փոքր են և չեն կարող ապահովել քաղաքի ներկա էկոլոգիական պահանջները: Ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության հաշվարկների յուրաքանչյուր քաղաքաբնակին անհրաժեշտ է 50մ<sup>2</sup> քաղաքային կանաչ տնկարկ: 2011թ. մարդահամարի տվյալներով Գյումրի քաղաքն ունի 121976 բնակչություն, և եթե նույնիսկ հաշվի չառնենք փողոցների անբարեկարգ լինելը և կիսափլված շինությունների առկայությունը, ապա քաղաքի բնակչության նորմալ կենսագործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է 620հա կանաչ տարածք:

Մի քանի խնամված այգիների և պուրակների հետ մեկտեղ, քաղաքի բնակելի հատվածում գտնվող կանաչ տնկարկների մի զգալի մասն ավելի քան 20 տարի մատնված է անուշադրության, լրիվ ավերված կամ կիսաավերված վիճակում են, տեղ-տեղ վերածված աղբակույտերի: Դրանց թվում են Բարեկամության զբոսայգին, Կոմերիտամիության այգին, Գյումրին հատող գետակների երկարությամբ ձգվող կանաչ տարածքները: Մերձքաղաքային սանիտարապաշտպանիչ գոտիները, ճանապարհային տնկարկները 1988թ-ից ի վեր գրեթե ամբողջությամբ հատվել են: Լուրջ խնդիր ենք համարում այն, որ հաճախ «մինչև բունը» էտվում են վտանգ չներկայացնող ծառերը: Փողոցային տնկարկներում զգալի մաս են կազմում փաստացի չկանաչապատված հատվածները, մայրուղիների մեծ մասի ծառապատման խտությունը խիստ անբավարար է, ծառուղիների հիմնական մասը ընդհատվող են կամ միաշար, որի արդյունքում նվազել է դրանց նշանակությունը:

«Մոնիթորինգ հանուն ապագայի» երիտասարդական նախաձեռնող խմբի կողմից 2014թ Գյումրիում անցկացված սոցիալոգիական արդյունքները ցույց են տվել, որ կանաչապատ տարածքների խիստ անբավարար քանակը պայմանավորված է կառավարման համակարգում որակյալ մասնագետների պակասով, պատկան մարմինների և բնակչության անտարբերությամբ, ոռոգման համակարգի բացակայությամբ, ոչ բավարար խնամքով, գիշերային ժամերին լուսավորվածության խնդրով, աղբամանների պակասով և այլն:

Գյումրի քաղաքի համար լուրջ հիմնախնդիր է նաև ջրային ռեսուրսների պահպանությունը: Քաղաքի հարավում տեղակայված արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանն արդեն 25 տարի է չի գործում և այժմ բոլոր հոսքաջրերը առանց մաքրման լցվում են քաղաքի տարածքով հոսող գետակներ՝ Ղոր-Ղորի, Գյումրի և Չերքեզի-Չոր, որոնք գործնականում վերածվել են բաց հոսող կոյուղու կոլեկտորների (Հասարակության բնապահպանական իրազեկության և շահերի պաշտպանության տեղեկատու ուղեցույց, Գ., 2008թ.):

Քաղաքում գոյություն ունեն մակերևութային ջրերի ջրահեռացման առանձին, ինչպես նաև քարե ջրթող խողովակների «Քարես» կոչվող հին (1820թ.) համակարգեր: Կոյուղու այդ համակարգի բոլոր կոլեկտորները գրավիտացիոն են և հիմնականում հոսելով հյուսիսից դեպի հարավ՝ թափվում են քաղաքի մեջ («Շիրակ-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ, «Գյումրի քաղաքի տարածքի բնապահպանական և սոցիալական գնահատում», 2017թ): Գյումրու կոյուղու ներկայիս համակարգը լավ կազմակերպված չէ, և ընդհանուր առմամբ այն չի սպասարկվում՝ բացառությամբ խցանումների առաջացման դեպքում հրատապ նորոգումների:

Անբավարար վիճակում է նաև քաղաքի ջրամատակարարման համակարգը: Ջրակորուստները հասնում են ահռելի չափերի, որի հիմնական պատճառը ջրատարների և ներքին ցանցի քայքայվածությունն է, չկան ջրահեռացման և դրենաժային համակարգեր, անձրևատարեր: Վերջին տարիներին մեծ աշխատանք կատարվեց գերմանական KFW բանկի կողմից, որը 2 փուլով ֆինանսավորեց և իրականացրեց Գյումրիում ջրագծերի, ջրատարների փոփոխման աշխատանքները, սակայն 3-րդ փուլը դեռ չի սկսվել և ամբողջական աշխատանքները դեռ չեն ավարտվել:

Գյումրի քաղաքի համար կարևոր ենք համարում նաև օդային ավազանի վիճակը: 1999թ. քաղաքի շրջակա միջավայրում խիստ բարձր է եղել փոշու պարունակությունը կազմում է 2,03մգ/մ<sup>3</sup>, 2008թ. տվյալներով այն կազմել է 0,4մգ/մ<sup>3</sup>, իսկ 2017թ.՝ 0,326 մգ/մ<sup>3</sup>, 2018թ. փոշու քանակը ՍԹԽ գերազանցում է 2,2 անգամ (ՀՀ Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն, 2018թ.): Միննույն ժամանակ պետք է նշել, որ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան խտությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԽ-ները: Օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են տրանսպորտը, փողոցների անբարեկարգ լինելը, մայրերի մեծ մասամբ բացակայությունը, անավարտ և կիսավեր շինությունները, կանաչ տարածքների անբավարար լինելը և մերձքաղաքային դաշտապաշտպան անտառաշերտերի բացակայությունը:

Գյումրի քաղաքն ունի նաև սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման խնդիր: Նրա հյուսիս-արևմտյան մասում՝ Ախուրյանի գետահովտում, գտնվում է գործող աղբավայրը, որն իր կառուցվածքով և տեղակայումով չի համապատասխանում սանիտարահիգիենիկ պահանջներին. պաշտպանված չէ սանիտարապաշտպանիչ գոտին՝ 1000մ, ցանկապատով անջատված չէ, չեն տարանջատվում հատուկ վտանգավոր թափոնները: Այստեղ չկան աղբամանների կամ մեքենաների լվացման համար նախատեսված վայրեր: Աղբն այրվում է անգամ արևի ճառագայթներից:

Վերջին 20-25 տարիների ընթացքում էական փոփոխությունների են ենթարկվել կոշտ կենցաղային թափոնների ծավալն ու բաղադրությունը: Ներկայումս կենցաղային թափոնների մեջ զգալի են թղթի, մետաղի և ապակու մնացորդները, որոնք կարելի է ենթարկել հումքի երկրորդային մշակման:

2017թ. Գյումրիում «Կոմպաս» գիտահետազոտական, խորհրդատվական և կրթական կենտրոն» ՀԿ կողմից իրականացվել է «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն որակյալ կոմունալ ծառայությունների Գյումրիում» ծրագիրը (Գյումրիում աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների մոնիթորինգի զեկույց, Գ., 2017թ.): Ըստ այս մոնիթորինգի, չնայած աղբահանության և փողոցների լուսավորության ոլորտում որոշակի տեղաշարժերի, ակնկալվող արդյունքներն ակներև չեն:

Մոնիթորինգի ընթացքում բացահայտվել է, որ աղբամանների քանակը հիմնականում փոքր է տվյալ տարածքում բնակչության խտությունից, ինչը շրջակայքի աղտոտվածության պատճառ է հանդիսանում: Աղբամանների մի մասը օգտագործման համար պիտանի չեն, մնացածը գտնվում են «լավ» կամ «նորմալ» վիճակում: Դիտարկված 169 փողոցներից մաքրվում են 41-ը, որոնք բոլորը կենտրոնական

փողոցներն են: Ոչ կենտրոնական փողոցներում սանիտարական մաքրման աշխատանքներ չեն իրականացվում:

Ամփոփելով աշխատանքը՝ նշենք իրավիճակի բարելավման այն կարևոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ են Գյումրի քաղաքի շրջակա միջավայրի պահպանության համար.

- Մեծացնել կանաչապատ տարածքների քանակը, հատկապես քաղաքի կենտրոնական մասում, կիսակառույց թաղամասերի չկառուցապատված տարածքներում, մայթեզրերին, ստեղծել նրանց համար ոռոգման համակարգ, իրականացնել խնամք և սանիտարական մաքրում:
- Ստեղծել կանաչ տնկարկների ռեեստր- տեղեկագիր, կառավարման պետական համակարգ՝ ներգրավելով որակյալ մասնագետների, նրանց և բնակչության պահանջով վերացնել պետական մարմինների անտարբերությունը:
- Քաղաքային միջավայրի ազատ մակերեսներում կառուցել նոր ջրավազաններ, շատրվաններ, վերականգնել շարքից դուրս եկածները:
- Կառուցել քաղաքի կեղտաջրերի մաքրման կայան:
- Վերանորոգել և կառուցել նոր ջրահեռացման համակարգեր, հնարավորինս բարելավել քաղաքի կոյուղու համակարգը:
- Ստեղծել կենցաղային թափոնների տարբեր տեսակների (թղթի թափոն, մետաղի և ապակու ջարդոն, պոլիէթիլենային թաղանթներ, պլաստմասսե շշեր) ընդունման կետեր:
- Վերահսկելի դարձնել աղբահանության իրականացման հաճախականությունը, վերանայել աղբամանների տեղադրման վայրերը, դրանց քանակն ու տեղաբաշխումը:
- Տեղական որոշումներով սահմանել աղբը չնախատեսված վայրերում թափելու և շինարարական աղբը կենցաղային աղբի համար նախատեսված աղբարկղերում թափելու համար տուգանքների համակարգ:
- Մշակել «Գյումրու գետակների մաքրման ռազմավարություն» և ֆինանսական տարբեր աղբյուրներից հայթայթել միջոցներ այն իրականացնելու համար:
- Բնակչության մոտ մեծացնել բնապահպանական մտածողությունը, տանել քարոզչական աշխատանքներ, պատրաստել տեղեկատու թերթիկներ և գովազդներ, կազմակերպել հեռուստաքննարկումներ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյումրի քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման գործընթացների հանրային մոնիթորինգի արդյունքները, Զեկույց, Գյումրի, 2014թ.
2. Գյումրիում աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների մոնիթորինգի զեկույց, Գյումրի, 2017թ.
3. Էկոլոգիական տեղեկատու Գյումրիում գործող հասարակական և պետական կառույցների համար, Երևան, 1999թ.
4. ՀՀ Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն
5. Հասարակության բնապահպանական իրազեկության և շահերի պաշտպանության տեղեկատու ուղեցույց, Գյումրի, 2008թ.
6. «Շիրակ-Զրմուղկոյուղի» ՓԲԸ, ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում, տեխնիկական և

հեղինակային վերահսկողություն, «Գյումրի քաղաքի տարածքի բնապահպանական և սոցիալական գնահատում», 2017թ:

## ABOUT THE PROBLEMS OF ENVIRONMENTAL PROTECTION OF GYUMRI CITY

Candidate of geographical sciences, associate professor, G. R. Avetisyan

ShSU, Gyumri, RA [Gayane.avetisyan.5@mail.ru](mailto:Gayane.avetisyan.5@mail.ru)

Following the earthquake in 1988, a very complicated ecological situation emerged in Gyumri, which is still having place. The city has more than two dozens of environmental problems today that do need urgent solution. They have a significant impact on the quality of the environment and health of population.

In this article the most important environmental issues of Gyumri are highlighted that require immediate solution, in particular we have underlined the issues of green areas of the city, water supply and drainage, air basin, sanitary and hygienic condition, garbage disposal, as well as have proposed certain ways for the solution of those.